

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՋԱՆՔԵՐԸ ԱՐԱԲԵՐԵՆԻ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱՆՈՒՄ ԴՐԱ ԴԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ  
Երիցյան Հ. Ա.

Հոդվածը ներկայացնում է ԱՄԷ կառավարության ջանքերն ուղղված ԱՄԷ-ում արաբերենի ճգնաժամի հաղթահարմանը: Արաբերենը ճգնաժամից հանելու համար որոշակի փոփոխություններ են կատարվում կրթական ծրագրերում, իրականացվում են պետական նախաձեռնություններ՝ արաբերենի կիրառումը տարբեր ոլորտներում խրախուսելու համար: Հանրահայտ քաղաքական գործիչների կողմից հովանավորվող նախաձեռնությունները վերափոխում են հասարակության վերաբերմունքը սեփական լեզվի, մշակութային արժեքների և ինքնության նկատմամբ:

**Բանալի բառեր.** արաբերեն, արաբերենի ճգնաժամ, լեզվական պետական քաղաքականություն, լեզվաբանություն, լեզվական ազդեցություն, արաբերենի խրախուսման ռազմավարություն, արաբերենի կանոնադրություն, ընթերցանության մրցույթ, արաբերենի համաժողով:

**Նախաբան:** Արաբական Միացյալ Էմիրությունները, 21-րդ դարի սկզբներից սկսած, տարեցտարի նոր առաջընթաց և զարգացում է ապրում մի շարք բնագավառներում, ինչպիսիք են տնտեսությունը, զբոսաշրջությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, արհեստական բանականությունը, տիեզերագիտությունը և այլն:

Միևնույն ժամանակ տնտեսական զարգացումը իր բացասական ազդեցությունն է թողել արաբերենի վրա, իսկ գլոբալիզացիայի նկատմամբ պետության ձգտումները աստիճանաբար հանգեցրել են արաբերենի դերի նվազեցմանը հասարակության շրջանում: ԱՄԷ-ն

վարում է բաց զբոսաշրջային քաղաքականություն՝ զբոսաշրջիկների և օտարերկրյա ներդրողների համար ստեղծելով բարենպաստ պայմաններ և հասանելի ծառայություններ տարբեր լեզուներով: ԱՄԷ-ում գործում են օտարալեզու բազմաթիվ մասնավոր դպրոցներ, ինչպես նաև համաշխարհային հայտնի համալսարանների մասնաճյուղեր:

Պետության հիմնադրումից ի վեր՝ ԱՄԷ հիմնադիր նախագահ Ն. Վ. շեյխ Ջայեդ բին Սուլթան Ալ Նահյանը մեծ ուշադրություն էր դարձնում պետության և հասարակության զարգացմանը, դեռևս 70-ական թվականներից էմիրաթցի ուսանողներին կրթաթոշակ էր տրամադրում արտասահմանում կրթություն ստանալու համար: Առանձնահատուկ ուշադրության կենտրոնում էր անգլերենի ուսուցումը՝ այլ երկրների հետ հարաբերություններ հաստատելու համար: Սակայն ժամանակի հետ այս ձգտումները, օտարերկրյա դպրոցների առկայությունը, աշխատանքայի ներգաղթը ասիական երկրներից և տնտեսական վերելքը ազդեցին արաբերենի վրա:

Այնուամենայնիվ, վերջին տարիների ընթացքում ԱՄԷ կառավարությունը գիտակցեց այն վտանգը, որը կախված է արաբերենի վրա, և սկսեց իրականացնել մի շարք նախաձեռնություններ՝ ուղղված արաբերենի պահպանմանը և դերի բարձրացմանը պետական մի շարք ոլորտներում: Մեծ ջանքեր են գործադրվել արաբական ինքնությունն ու արժեքները պահպանելու ուղղությամբ [1]:

Արաբերենի դերի բարձրացմանն ուղղված պետական նախաձեռնություններից կարևոր է նշել էլեկտրոնային սարքավորումների արաբականացումը, որի նպատակն է ամրապնդել արաբերենի դիրքը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում նույնպես:

2006թ. անցկացված մարդահամարի համաձայն՝ Էմիրություններում բնակվում է շուրջ 200 ազգություն, որոնք խոսում են 100 բարբառով և 10 տարբեր լեզուներով, և որ այդ լեզուների շարքում անգլերենն է գլխավոր առօրեական խոսակցական լեզուն, որն աստիճանաբար էտ է մղում արաբերենի կիրառումը առօրյա կյանքում: Այս վտանգը կանխելու համար 2008թ. որոշում է ընդունվել բոլոր պետական կառույցներում օգտագործել միայն արաբերենը՝ որպես նամակագրության, գրագրության և վերլուծությունների լեզու: Որոշման համաձայն՝ ստեղծվել է համակարգման և լեզվական ինտեգրման խորհուրդ՝ Էմիրությունների մակարդակով, որի վրա դրված է արաբերենի՝ որպես պետական լեզվի կիրառման վերահսկողությունը [2]:

2017թ. ապրիլին կրթության և գիտության նախարարությունը և Աբու Դաբիի կրթության խորհուրդը որոշում ընդունեցին ուսումնական հաստատություններում ուսուցանել բոլոր առարկաները գրական արաբերենով՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցառումներ այդ որոշումը իրականացնելու համար: Այս քայլով նախարարությունն ու Աբու Դաբիի կրթության խորհուրդը նպատակ ունեին ուսանողների մոտ զարգացնել սերը և հետաքրքրությունը մայրենի լեզվի նկատմամբ, կապ ստեղծել իրենց արժեքների հետ՝ ինքնությունը պահպանելու համար: Նախարար Հուսեյն ալ Համմադին նշել է. «Արաբերենը մեր ժառանգության, մեր պատմության, մեր ինքնության և մեր քաղաքակրթության ամենակարևոր տարրն է, իսկ արաբերենով դասընթացներ անցկացնելը կնպաստի արաբերենի ամրապնդմանն ուղղված ջանքերին, ինչը կանդրադառնա ուսանողի գիտական զարգացման վրա, և այդպիսով հնարավորություն կընձեռնվի ուսանողներին և դպրոցականներին շատ ժամանակ անցկացնել արաբերեն խոսելով, կարդալով և լեզվական հմտությունների կատարելագործմամբ» [3]:

Կրթության և գիտության նախարարությունը կրթական զարգացման ծրագիր է մշակել 2015-2021թթ. համար, որը ներառում է մի շարք նախագծեր և տարբեր ծրագրեր՝ ուղղված արաբերենի դերի բարձրացմանը դպրոցներում:

Դպրոցներում կրթական բարեփոխումներ անելիս նախարարությունը չի կարող հաշվի չառնել նաև այն հանգամանքը, որ Էմիրություններում, բացի տեղացիներից, բնակվում են ավելի քան 200 ազգություններ, որոնք բնակչության մեծամասնությունն են կազմում: Ուստի նրանց համար հնարավորություն է ստեղծվում ընտրություն կատարել մասնավոր դպրոցների միջև, որոնք հարմարեցված են նրանց կրթական պահանջներին: Սակայն բացի օտարերկրացիներից, մասնավոր դպրոցներ հաճախում են մեծ թվով տեղացիներ [4]: Ըստ ԱՄԷ կրթության և գիտության նախարարության վիճակագրության պետական և մասնավոր դպրոցներում սովորողների պատկերը ներկայացված է կից աղյուսակում:

**Աղյուսակ 1:**

**Պետական և մասնավոր դպրոցների քանակը ԱՄԷ-ում**

	Պետական դպրոցներ	Մասնավոր դպրոցներ
Դպրոցների քանակը	639	580
Ուսուցիչների քանակը	23,146	46,870
Աշակերտների քանակը	287,725	793,295

Աղյուսակից պարզ է դառնում աշակերտների մեծ թիվը, որոնք այցելում են մասնավոր դպրոցներ: Սա մի կողմից կարելի է բացատրել ժողովրդագրական տվյալներով, որտեղ 9,5 միլիոն բնակչությունից մոտ մեկ միլիոնն է էմիրաթցի, սակայն Դուբայի գիտելիքների և մարդկային զարգացման կառույցի ուսումնասիրողների ներկայացրած տվյալների համաձայն՝ Դուբայի մասնավոր դպրոցներում միայն ուսանում է 23 հազար էմիրաթցի:

Կրթության և գիտության նախարարությունից բացի, արաբերենի կարգավիճակով անհանգստացած է նաև ԱՄԷ կառավարությունը: Լեզվի դերի բարձրացմանն ուղղված մի շարք նախաձեռնություններ են ձեռնարկվել պետության ղեկավարների կողմից: Մտորն ներկայացնում ենք ամենակարևոր նախաձեռնությունները:

- **Արաբերենի կանոնադրության հռչակումը**

2012թ. ապրիլին ԱՄԷ փոխնախագահ, վարչապետ, Դուբայի կառավարիչ Ն. Վ. շեյխ Մուհամմադ բին Ռաշիդ ալ Մաքթումը հայտարարեց «Արաբերենի կանոնադրության» ընդունման նախաձեռնության մասին, որի նպատակն է ամրապնդել արաբերենի դերը և դիրքը հասարակության մեջ [5]: Այս կանոնադրությունը պետք է դառնա լեզվի պահպանմանն ուղղված ռազմավարությունների և օրենքների հիմքը և պետք է նպաստի առօրյա կյանքում արաբերենի լայն կիրառմանը:

- **«Մուհամմադ բին Ռաշիդի անվան Արաբերենի մրցանակ»**

Արաբերենի դերը հասարակության մեջ բարձրացնելու ուղղությամբ ԱՄԷ կառավարության նախաձեռնությունների մեջ առանձնահատուկ դեր ունի «Մուհամմադ բին Ռաշիդի անվան Արաբերենի մրցանակը» [6], որը հասարակության ուշադրությունն է կենտրոնացնում արաբերենի պահպանման վրա: ԱՄԷ փոխնախագահ, վարչապետ, Դուբայի կառավարիչ Մուհամմադ բին Ռաշիդ ալ Մաքթումը համարվում է էմիրությունների ամենամեծ դերակատարումն ունեցող բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը, որն ունի պետության զարգացման իր ուրույն հեռանկարներն ու տեսլականը:

- **Արաբերեն ընթերցանության մրցույթ, ընթերցանության տարի**

Ընթերցանության մրցույթը նույնպես ԱՄԷ փոխնախագահ, վարչապետ, Դուբայի կառավարիչ Մուհամմադ բին Ռաշիդ ալ Մաքթումի նախաձեռնությունն է, որը շատ կարևոր է արաբերենի դերը շեշտելու և դրա կիրառությունը խրախուսելու համար: Այս մրցույթն իր տեսակով առաջին արաբական նախաձեռնությունն էր, որն իր շուրջը միավորեց արաբ ուսանողներին: Այս մրցույթի շնորհիվ արաբերեն

ընթերցողների թիվը միլիոններով ավելացավ ինչպես արաբական աշխարհում, այնպես էլ դրանից դուրս:

Առաջին իսկ փուլում մրցույթին մասնակցեց 3 միլիոն 583 հազար 817 ուսանող արաբական 15 երկրից, և ընդհանուր առմամբ ընթերցվեց 175 միլիոն գիրք՝ տարբեր բնագավառների:

**Եզրահանգում:** Ամփոփելով կատարված հետազոտությունը՝ կարելի է եզրակացնել, որ ԱՄԷ-ում կառավարությունը անհանգստացած է արաբերենի կարգավիճակով և սպառնացող մարտահրավերներով: Նկատելի է պետական ռազմավարության փոփոխություն՝ արաբերենի դերի բարձրացման նպատակով: Կարելի է եզրակացնել, որ կառավարության ջանքերը տալիս են իրենց կարճաժամկետ արդյունքները, սակայն ռազմավարությունը պետք է շարունակական լինի և ժամանակ առ ժամանակ վերափոխվի՝ լեզվական դրության համաձայն:

### **УСИЛИЯ ПРАВИТЕЛЬСТВА ОБЪЕДИНЕННЫХ АРАБСКИХ ЭМИРАТОВ ПО ПРОДВИЖЕНИЮ АРАБСКОГО ЯЗЫКА И ЕГО ФУНКЦИОНИРОВАНИЕ В ОБЩЕСТВЕ**

**Ерицян А. А.**

Цель статьи - представить усилия правительства ОАЭ по преодолению арабского языкового кризиса в ОАЭ. Чтобы вывести арабский язык из кризиса, вносятся определенные изменения в образовательные программы, реализуются государственные инициативы по поощрению использования арабского языка в различных сферах. Инициативы известных политиков меняют отношение общества к своему языку, культурным ценностям и самобытности.

**Ключевые слова:** арабский язык, кризис арабского языка, лингвистика, роль английского языка, государственная языковая политика, стратегия продвижения на арабском языке, хартия арабского языка, конкурс чтения, конференция по арабскому языку, роль медиа в сохранении языка.

### **THE EFFORTS OF THE GOVERNMENT OF THE UNITED ARAB EMIRATES TO PROMOTE THE ARABIC LANGUAGE AND INCREASE ITS ROLE IN SOCIETY**

**Yeritsyan H. A.**

The purpose of the article is to present the efforts of the UAE government to overcome the Arabic language crisis in the UAE. In order to get Arabic out of the crisis, certain changes are being made in the educational

programs, state initiatives are being implemented to encourage the use of Arabic in various spheres. The initiatives sponsored by famous politicians change the attitude of the society towards its own language, cultural values and identity.

**Keywords:** Arabic language, crisis of the Arabic, linguistics, the role of the English language, State Language Policy, promotion strategy in Arabic, charter of the Arabic language, Muhammad bin Rashid Prize in Arabic language, reading competition, Arabic language conference, the role of media in preserving the language.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԱՄԷ -ն պահպանում է «Դալի լեզուն» և ամրապնդում արաբական ինքնությունը (Թարգմանված արաբերենից) <https://www.albayan.ae/across-the-uae/education/2017-04-23-1.2924020> (23.04.2017):
2. ԱՄԷ կրթության և գիտության պաշտոնական էջ <https://www.moe.gov.ae> (09.03.2008):
3. ԱՄԷ փաստերի և թվագրության պաշտոնական էջ, <https://u.ae/ar-ae/about-the-uae/fact-sheet> (26.08.2020):
4. ԱՄԷ քաղաքացիների երեխաները սովորում են մասնավոր դպրոցներում <https://www.government.ae/ar-AE/information-and-services/education/school-education-k-12/joining-k-12-education/private-schools-in-the-uae> (28.01.2013):
5. Արաբերենի կանոնադրության հոչակումը <https://arabichighness.wordpress.com/%D9%85%D9%8A%D8%AB%D8%A7%D9%82-%D8%A7%D9%84%D9%84%D8%BA%D8%A9-%D8%A7%D9%84%D8%B9%D8%B1%D8%A8%D9%8A%D8%A9/>, (28.04.2012):
6. Մուհամմադ բին Ռաշեդի մրցանակի պաշտոնական էջ <http://arabicaward.ae/p/objective-of-the-award> (07.02.2019):

### Տեղեկություններ հեղինակի մասին

**Երիցյան Հ. Ա.** –ասպիրանտ

Երևանի պետական համալսարան

ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանության թարգմանիչ

Էլ. փոստ՝ [hasmikyericyan@gmail.com](mailto:hasmikyericyan@gmail.com)

Տրվել է խմբագրություն՝ 13.08.2021

Գրախոսվել է՝ 07.12.2021